

եւ մարդկային միացած յանձին Բանին, ան-
շիրթելի, անայլայելի, անբաժանելի եւ ան-
քակտելի միութեամբ, ինչպէս սահմանած է
տիեզերական Ս. Ժողովն Քաղկեդոնի, զոր
պէտք է մասնաւորապէս ընդունին, խոստո-
վանելով դարձեալ թէ Ս. Լեւոն հերետիկոս
չէ, ինչպէս հռչակած են Եւտիքեանք եւ Դիոս-
կորեանք Յիսուսի սուտ ժողովին մէջ. եւնդո-
վելով բոլոր անոնք, որոնք զանիկա հերետի-
կոս անուանած են եւ կ'ընդունին սխալմամբ:
Արդ եթէ յիշեալ արքեպիսկոպոսն եւ միւս
հայ վարդապետները տան յիշեալ դաւանու-
թիւնը նշանակուած կերպով, պիտի ապացու-
ցանեն թէ ե'ւ իրենք ե'ւ բոլոր հայ ազգը կը
կնքեն համաձայնութիւն Նորին Սրբութեան
ծիրանաւորներու հետ. յանուն որոնց կ'ող-
ջունեմ սիրով Ձեր Վերապատուութիւնը:

Հռոմ, 19 Փետր. 1628:

Յայտնի չէ թէ ինչ արդիւնք ունեցաւ Ս.
Ժողովի այս քայլը: 1628ին, երբ էջմիածին
անհովիւ մնացած էր, Սահակ կաթողիկոսի
փախստեան պատճառաւ, հայ կղերին գլխաւոր
մտածմունքը ուղղուած էր դատարկացած ա-
թոռին վրայ արժանաւոր կաթողիկոս մը բաղ-
մեցնել: Մովսէսի աշակերտները, որոնք իրենց
աղբեցութեան տակ առած էին արեւելեան
Հայաստանն եւ Պարսկաստանի գաղութը, կը
պաշտպանէին իրենց ուսուցչին եւ մեծ
վարդապետին թիկնածութիւնը: Արեւմտեան
Հայոց եւ գաղութներու ձայնը ի նպաստ իրենց